ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
TRAVAIL DE RECHERCHE

Թեմա՝ «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները»
Առարկա՝ ֆրանսերեն
Ուսուցիչ՝ Էմիլիա Աբգարյան
Ուսումնական հաստատություն՝ Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց

21.09.2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
1. ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ (ՏԵՍԱԿԱՆ).....4
1.1 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ……....4
1.2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ……4
1.3 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ……7
1.4 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ… ……7
1.5 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ……..8
2. ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ (ԳՈՐԾՆԱԿԱՆ).....10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...15

Ներածություն

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ: Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք: Այս հետազոտական աշխատանքի թեման նվիրված է ուսուցման ինտերակտիվ մեթոդներին, քանզի վերջիններս այսօր առավել արդիական են:

Թեմա 1.1 Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները

Նպատակ: Հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ մեթոդով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, կատարելագործել աշակերտի կողմից ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառական հմտությունները, բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը:

Խնդիրներ: Բացահայտել ուսուցման ինտերակտիվ ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորությունը, համեմատել այլ մեթոդների հետ, բահահայտել տվյալ մեթոդի դրական և բացասական կողմերը:

Հետազոտությունը բաժանված է հետևյալ մասերի՝ բովանդակություն, ներածություն, առաջին մաս (տեսական), երկրորդ մաս (գործնական), եզրակացություն և օգտագործված գրականության ցանկ:

Առաջին մասում ուսումնասիրվում են ուսուցման մոդելները, որոնցից առավել առանձնացվում է ինտերակտիվը, ինտերակտիվ ուսուցման գործիքները, ինտերակտիվ տեխնոլոգիաների տեսակները, դասի սկզբունքները և արդյունքները:

Երկրորդ մասում կատարվել է հետազոտություն, թե ինչպես կարելի է այս մեթոդները օգտագործել դասապրոցեսի ընթացքում և արդյո՞ք այդ մեթոդներն արդյունավետ են:

Այսպիսով, դասը ստեղծագործական գործընթաց է, որի անցկացման մեթոդները նպատակին հասնելու ուղիներ են, իսկ յուրաքանչյուր ճանապարհ իր դժվարություններն ունի: Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք: Ուսուցիչը պետք է կիրառի ժամանակակից մեթոդներ և հնարներ: Դասի արդյունավետ կազմակերպման համար առավել կարևոր պայման է մեթոդի ճիշտ ընտրությունը:

Գլուխ 1
1.1 Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները

Ուսուցումը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոցն են:

Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ, այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլև, թե ինչպես են սովորում աշակերտները: Նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ծրագրերի թարմացում և կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

Երեխան կարող է սովորել, բայց չդառնալ հայտնի գիտնական: Այնուամենայնիվ նա տարիների ընթացքում դառնում է ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը և ինքնակատարելագործվել: Այդ ամենին հասնելու համար նրան անհրաժեշտ է սովորել:

Ուսուցիչները միանշանակ կհամաձայնեն, որ դասի դաստիարակչական մասը նույնքան կարևոր է, ինչքան ուսումնականը: Այդ երկու բաղկացուցիչները փոխկապակցված են իրար: Ուսումը աշակերտի համար գրավիչ դարձնելու նպատակով անհրաժեշտ է հետաքրքիր պայմաններ ստեղծել: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի, հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կդառնա դասապրոցեսի ակտիվ մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ երբ մարդը ինչ-որ բան ինքնուրույն է անում՝ հիշում է կատարածի 90%-ը: Նոր կրթական ռազմավարությունը մեզ թույլ է տալիս նոր, ինտերակտիվ մեթոդների, մոտեցումների իրագործման հնարավորություն:

1.2 Ուսուցման մոդելները

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ, ակտիվ և ինտրերակտիվ :

Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դա նշանակում է, որ աշակերտները յուրացնում են նյութը ուսուցչի խոսքով պայմանավորված կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը: Նման դասի ժամանակ «գլխավոր հերոսը» ուսուցիչն է: Դպրոցականները պարզապես պասիվ ունկնդիրներ են: Այս մեթոդով ուսանողները շփվում են ուսուցչի հետ վերահսկողական կամ անկախ աշխատանքի, թեստերի, ինչպես նաև հարցումների միջոցով:

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը, այսինքն՝ միայն ինքնուրույն գործունեության, ինքնուսուցման, ինքնադաստիարակության, ինքնազարգացման տեխնոլոգիաները: Այսօր ակտիվ մեթոդները սկսում են ավելի լայնորեն կիրառվել: Միևնույն ժամանակ, դպրոցականները պասիվ ունկնդիրներ չեն: Նրանք դառնում են դասի ակտիվ մասնակիցներ ՝ հավասար իրավունքներ ունենալով ուսուցչի հետ: Սա խթանում է երեխաների ճանաչողական գործունեությունը և վերջիններիս անկախությունը: Միաժամանկ, գիտելիքներ ստանալու գործընթացում մեծանում է ստեղծագործական առաջադրանքների դերը: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են միայն ուսուցչի հետ: Այն օգտագործելիս դպրոցականները սովորում են միայն սեփական ցանկությամբ: Երեխաները շփվում են ուսուցչի հետ, բայց միմյանց հետ երկխոսության չեն մասնակցում: Այսպիսով, ուսուցման ակտիվ մեթոդը միակողմանի է: Այն թույլ չի տալիս խմբում փոխազդեցության փորձ ձեռք բերել: Ակտիվ մեթոդների նպատակն է բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել որպես ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում ուսանողները համագործակցում են ոչ միայն դասախոսի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցումը տալիս է բազմաթիվ հնարավորություններ աշակերտներին, որպեսզի նրանց խոսքային, լսողական, գրելու և կարդալու կարողությունները հավասարապես զարգանան (Meyers and Jones, 1993, p.6):

Ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը նոր դերակատարում է ուսուցիչների համար: Այս մեթոդի կիրառմամբ նրանք դառնում են ուսումնական գործընթացի ակտիվ առաջնորդներ: Այնուամենայնիվ, շատ ուսուցիչներ դեռ լիարժեք չեն գնահատում դպրոցում ինտերակտիվ ուսուցման մեթոդների էությունը, այլ շարունակում են փոխանցել գիտելիքները ավանդական մեթոդներով: Իրականում, նրանք պետք է կարողանան կազմակերպել իրենց անկախ ուսուցումը, հասկանալ աշակերտների հոգեբանությունը եւ կիրառել նոր մանկավարժական հասկացություններն ու

տեխնոլոգիաները: Ժամանակակից կրթությունը կարիք ունի մասնագետների, որոնք պատրաստ են որոշումներ կայացնել ինքնուրույն, որոնք կարողանան պատասխանել աշակերտների բոլոր հարցերին նրանց համար հասկանալի լեզվով եւ կատարել առողջ քննադատություններ: Այսօրվա մեր դպրոցներում դասի մեծ մասը ուսուցիչն է վարում՝ պատմելով, բացատրելով դասը: Աշակերտներին շատ քիչ ժամանակ է հատկացվում ինքնաարտահայտվելու և իրենց մտքերն ու վերլուծությունները փոխանցելու ուսուցչին, նրանք ավելի շատ պասիվ լսողի դերում են հանդես գալիս: Ըստ Բարդիիլ Մուսայի, մենք սովորաբար օգտագործում ենք «ուսուցիչ» տերմինը այն անձանց համար, ովքեր ունեն հիմնական, ֆունկցիոնալ և մասնագիտական հմտություններ՝ աշակերտներին օգնելու գիտելիքներ ձեռք բերելու կարևորագույն գործում (Musai, B., 2014, p.3):

Դպրոցում ինտերակտիվ տեխնոլոգիաները պետք է օգտագործվեն դասի որոշակի փուլում: Դա անելու համար ամենից հաճախ օգտագործվում են գործիքներ, ինչպիսիք են էլեկտրոնային դասագրքերը, վերջերս հայտնի դարձած մուլտիմեդիայի գործիքները, համակարգչային փորձարկումները եւ մեթոդական աջակցությունը: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցման ինտերակտիվ մեթոդների լավագույն կիրառման ամենագովելի արդյունքները գրանցվել են օտար լեզվի եւ համակարգչային ուսուցման առարկայի դասերի ընթացքում: Երեխաները, ինտերակտիվ գրատախտակների, համակարգչի առկայության դեպքում, շատ ավելի շահագրգռված են սովորել, եւ դա նրանց համար հիանալի մոտիվացիա է: Համատեղ ուսուցումն այն է, երբ յուրաքանչյուր աշակերտ իր գիտելիքները փոխանակում է դասընկերների հետ, գոյություն ունի փոխադարձ աջակցության մթնոլորտ, որը զարգացնում է հաղորդակցման հմտությունները: Երեխաները սովորում են աշխատել թիմում, հասկանալ միմյանց եւ հաջողություն գրանցել: Ինտերակտիվ ուսուցման դեպքում, ուսուցիչը, նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով տրված իր հանձնարարություններով աշակերտներին ուղղորդում է անկախ և ինքնուրույն կատարել հետազոտություններ և վերլուծություններ:

Ուսուցչի գործառույթներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Անուշադրության չմատնել սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չասել ճիշտ պատասխանը:
4. Հետևել, որ քննադատության ենթարկվի արտահայտված միտքը, կարծիքը, այլ ոչ թե տվյալ միտքն արտահայտող աշակերտի անձը:
5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք կունենան աշակերտների համար գործնական և օգտակար նշանակություն:

Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս աշակերտը թույլ է տալիս սխալներ: Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսի ընթացքում թույլ տված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում

մասնագիտական գործունեության ժամանակ նույն սխալները չկրկնի: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչը միայն կարգավորում և կազմակերպում է գործընթացը և տալիս օգտակար խորհրդատվություն:

1.3 Ինտերակտիվ ուսուցման գործիքներ

Ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը սկսվել է սովորական տեսողական գործիքներով, պաստառներով, քարտեզներով, մոդելներով եւ այլն: Այսօր ինտերակտիվ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները ներառում են վերջին սարքավորումները՝ ինտերակտիվ գրատախտակներ, պլանշետներ, համակարգիչներ և պրոյեկտորներ:

Ուսուցման մեջ ինտերակտիվությունը օգնում է լուծել շատ խնդիրներ: Նյութի մատուցումը ինտերակտիվ մեթոդով դառնում է առավել արդյունավետ, կազմակերպվում են խմբային կամ զույգերով աշխատանքներ, որի ժամանակ աշակերտների եւ ուսուցչի միջեւ ավելի խորը շփում է հաստատվում և ստեղծվում է ջերմ մթնոլորտ:

1.4 Ինտերակտիվ դասի սկզբունքները և արդյունքները

Բոլոր աշակերտները ունեն հավասար իրավունքներ: Յուրաքանչյուր աշակերտ իրավունք ունի սեփական կարծիքն արտահայտել ցանկացած հարցի վերաբերյալ: Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը: Ոչ մի աշակերտի անձը չպետք է քննադատվի:

Պետք է հոգալ աշակերտների հոգեբանական պատրաստվածության մասին: Ոչ բոլորը կարող են լինել հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է երեխային խրախուսելը, որպեսզի նա ակտիվ մասնակցություն դրսևորի:

Ուսուցիչը պարբերաբար պետք է ակտիվացնի աշակերտների համագործակցությունը և հարկ եղած դեպքում փորձի վերացնել մասնակիցների միջև առաջացած լարվածությունը: Քննարկումների ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը պետք է անպայման միջամտի և օգնի կարգավորել խնդիրը: Դասի ընթացքում պետք է ակտիվորեն կիրառվեն տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ: Աշակերտների միջև հաղորդակցությունը պիտի իրականացվի ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս արագացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը տեսանելի դարձնել գործնական խնդիրների լուծման համար:

Ինտերակտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ: Արդյունքում մեծանում է աշակերտների հետաքրքրվածությունը և հետագա դասերի ընթացքում նրանց ակտիվությունը կարող է հասնել ցանկալի արդյունքի: Աշակերտի մոտ ձևավորվում է ինքնուրույն կերպով տեղեկատվություն որոնելու, գտնելու և վերլուծելու կարողություն, որի շնորհիվ աստիճանաբար զարգանում է նրանց աշխարհայացքը և մի շարք հմտություններ են ձեռք բերվում, ինչպիսիք են՝ համբերատար լսելու կարողություն, թիմում աշխատելու, համագործակցելու և առողջ բանավեճ վարելու ընդունակություններ: Ուսուցչի և աշակերտի համատեղ արդյունավետ աշխատանքը նպաստում է վստահելի փոխհարաբերությունների ձևավորմանը:

Կիրառելով ինտերակտիվ մեթոդներ ուսուցիչները հնարավորություն են տալիս աշակերտներին զարգացնել իրենց ստեղծագործ մտածելակերպը, որն ի վերջո կարող է լինել հիանալի նախապայման՝ թարմ, ինքնատիպ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքերի ձևավորման համար: Այդպիսով՝ հետագայում առաջացած ցանկացած խնդրի լուծում աշակերտը կարող է հեշտությամբ գտնել ոչ ավանդական եղանակներով:

1.5 Ինտերակտիվ տեխնոլոգիաների տեսակները

Ուսումնական գործընթացը պետք է իրականացվի համակարգված: Այդ պատճառով էլ նորարարական մեթոդի դասերին գիտելիքների արդյունավետ փոխանցման համար ուսուցիչը կիրառում է տարբեր եղանակներ:

1. Աշխատանք փոքր խմբերում: Աշակերտները բաժանվում են զույգերի, եռյակների և այլն: Ուսուցիչը մշակում է նոր մեթոդներ զույգերով աշխատանքը կազմակերպելու համար, որտեղ աշակերտները պետք է սովորեն ինքնուրույն հարցեր տալ միմյանց և պատասխանել «հակառակորդի» հարցերին: Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ մի քանի աշակերտներ «թաքնվում են» խմբի ստվերում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկվում է խմբային աշխատանքի վերջում խոսել սեփական ներդրումի մասին տվյալ խմբի աշխատանքի մեջ, խմբի մյուս անդամների ներդրումը և ի վերջո գնահատվում է ընդհանուր խմբի աշխատանքի որակը:
2. Կարուսելի տեխնիկա: Սովորողներին շատ է դուր գալիս ինտերակտիվ մեթոդների այս տեսակը: Դասարանում ձևավորվում են երկու օղակներ՝ ներքին և արտաքին: Այդ ձևով նրանք հասցնում են հաշված րոպեների ընթացքում խոսել մի քանի թեմաների շուրջ՝ փորձելով զրուցակցին ապացուցել մոտեցման իրենց կարծիքով ճիշտ տարբերակը:
3. Արագ յուրացում: Դասի լիարժեք ընկալման համար բարձր դասարաններում անցկացվում է յուրացման հետաքրքիր մեթոդ, որի

դեպքում խմբային աշխատանքի միջոցով նոր նյութի ուսուցման գործընթացը դառնում է առավել դյուրին: Դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց խմբերի: Նրանց տրվում են նոր նյութի հետ կապված տարբեր առաջադրանքներ և համապատասխան ժամանակահատված՝ առաջադրանքի կատարման համար:Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է առաջադրանքի լուծման իր տարբերակը և պատասխանում մյուս խմբերի կողմից առաջադրված հարցերին: Ուսուցիչը ուղղորդում է խմբերի աշխատանքը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով լրացումներ: Խմբերին տրված աշխատանքների կատարման արդյունքում ընկալվում է ուսումնասիրվելիք նյութը գործնական մակարդում և դասը էլ ավելի հետաքրքրական է դառնում երեխաների համար:

4. Առաջադրանքների ծառ: Այս մեթոդի էությունը հետևյալն է՝ դասարանը բաժանվում է երեք կամ չորս խմբերի: Խմբերն ունեն հավասար քանակությամբ աշակերտներ: Յուրաքանչյուր խումբ քննարկում է հարցը և գրառումներ կատարում իր «ծառի» վրա, հետո խմբերը, տեղափոխվելով «հարևան ծառ», արտահայտում են իրենց կարծիքները:
5. Խաղեր: Ուսումնական գործընթացում ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառման եղանակ կարող են լինել երեխաների համար առավել հաճելի տարբերակները՝ խաղերը: Դրանք կատարվում են հետևյալ փուլերով.

- Կողմնորոշում: Սա խաղի մասնակիցների և խաղը վարողի պատրաստման փուլն է: Ուսուցիչը ներկայացնում է աշխատանքի ընթացակարգը, դպրոցականների հետ քննարկում է պարապմունքների գլխավոր նպատակներն ու առաջադրանքները՝ տալով խաղի օրենքների բնութագրերը:
- Պատրաստվածության ստուգում: Ուսուցիչը բացատրում է խաղի բնույթը, անդրադառնում է խաղի առաջադրանքներին, կանոններին, դերերին, խաղի ընթացքին, միավորների հաշվվման կանոններին (խաղի վերաբերյալ կազմվում է աղյուսակ): Աշակերտները հավաքում են լրացուցիչ տեղեկատվություն, խորհրդակցում են ուսուցչի հետ և քննարկում խաղի բովանդակությունն ու գործընթացի փուլերը:
- Խաղի անցկացում: Խաղն սկսվելու պահից ոչ ոք իրավունք չունի միջամտելու և փորձելու փոխել խաղի օրենքները: Միայն խաղը վարողը կարող է ճշգրտել մասնակիցների գործողությունները, եթե նրանք շեղվում են խաղի կանոններից: Ուսուցիչը խաղին մասնակցություն չի ունենում: Առաջադրանքն այնպիսին է, որ նա պետք է հետևի խաղի ընթացքին, գրանցի արդյունքները, հաշվի միավորները, պարզաբանի անճշտությունները և մասնակիցների խնդրանքով անաչառ կերպով օգնի նրանց:
- Խաղի քննարկում: Սա խաղի վերլուծության, քննարկման և գնահատականների արդյունքների փուլն է: Ուսուցիչը և խաղի մասնակիցները, քննարկումներ կատարելով, փոխանակում են կարծիքներ, պաշտպանում են իրենց դիրքորոշումները և լուծումները,

խոսում են իրենց տպավորությունների մասին և կատարում եզրակացություններ: Այս փուլում գոյություն ունեն երկու մոդելներ. Առաջինը պասիվ մոդելն է, երբ աշակերտը հանդես է գալիս որպես ուսուցման «օբյեկտ» (միայն տեսնում և լսում է): Երկրորդը ակտիվ մոդելն է, որի ժամանակ աշակերտը դառնում է ուսուցման «սուբյեկտ» (կատարում է ինքուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ):

Այսպիսով, ինտերակտիվ ուսուցման գործընթացն ընթանում է բոլոր աշակերտների մշտական ակտիվության և փոխադարձ համագործակցության պայմաններում, որոնց շնորհիվ աճում է ուսուցման եղանակի արդյունավետությունը և բարելավվում է աշակերտների պատրաստվածությունը:

Գլուխ 2
Գործնական մաս

Դասավանդելով դպրոցում և կատարելով ուսումնասիրություններ՝ կարող եմ ասել, որ ֆրանսերեն լեզվի ուսուցման համար շատ անհրաժեշտ են ինտերակտիվ մեթոդները:

Ինտերակտիվ դասն այնպիսի դաս է, ուր ապահովվում է ուսուցիչ-սովորող սերտ համագործակցություն: Դասավանդողը հիմնականում հանդես է գալիս որպես կրթական գործընթացի կազմակերպող, իսկ սովորողը պետք է լինի այդ գործընթացի կենտրոնում, շահագրգռված լինի գործընթացով և ակտիվ մասնակցություն ունենա: Դասը պետք է այնպես կառուցված լինի, որ հնարավոր լինի ներգրավել դասարանի բոլոր աշակերտներին՝ յուրաքնաչյուրին ըստ իրենց հնարավորությունների: Նման դասերը շատ կիրառելի են դառնում այնպիսի դասարաններում, որտեղ սովորողների օտար լեզվի իմացությունը տարբեր մակարդակներում է: Դասավանդողը դասի մեջ ներգրավում է այնպիսի առաջադրանքներ, որոնք թույլ կտան բոլոր աշակերտներին իրենց մասնակցությունն ունենալ: Ինտերակտիվ դասի շնորհիվ տեղի է ունենում մտքերի և տեղեկությունների փոխանակում, քննարկում, ինչը նպաստում է անընդմեջ կատարելագործմանը, ինչպես սովորողի, այնպես էլ՝ դասավանդողի համար:

Ինտերակտիվ դասը կարելի է իրականացնել նաև առանց որևէ տեխնիկական միջոցի կիրառման: Այս դեպքում, սակայն, դասավանդողից և սովորողից ավելի շատ ժամանակ ու ջանք է պահանջվում: ՏՀՏ-ները (Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներ) խնայում են այդ ժամանակը՝ թույլ

տալով նախօրոք պատրաստվելու և պատրաստելու դասի թեման և ուսումնասիրման նյութը:

Ինտերակտիվ դասեր անցկացնելու համար լավագույն գործիքներից է ինտերակտիվ (էլեկտրոնային) գրատախտակը:Այս գրատախտակները գործածելու երկու հիմնական մեթոդ գոյություն ունի՝ որոնք են օգտագործել պատրաստի դասեր և ստեղծել դասարանին և դասավանդվող թեմային համապատասխան անհատական, հեղինակային նյութեր, որոնք ուղղված են դասավանդման որակի բարձրացմանը:

Ինտերակտիվ դասեր կարելի պատրաստել համակագչային տարբեր ծրագրերով: Օրինակ՝ Word, Power Point, Edpuzzle, Nearpod և այլն: Համացանցի առկայության դեպքում կարելի է ինտերակտիվ դասեր իրականացնել՝ օգտագործելով տարբեր կրթական կայքեր և համացանցային ռեսուրսներ: Ինտերակտիվ դասերի համար, ի վերջո, կարելի է, որպես հարմար կրթական տարածք, օգտագործել բլոգները, wiki տարածքները, անգամ սոցիալական կայքերը: Դասի ժամանակ դպրոցական կայքում տեղադրված ուսումնական նյութի վերաբերյալ մեկնաբանություններ գրելը նույնպես կարող է դառնալ ինտերակտիվ դասի մի նմուշ:

Ինտերակտիվ դասի օրինակ կարող են ծառայել Smart Notebook ծրագրով պատրաստված դասերը, որտեղ դասավանդողը ինքը կարող է ստեղծել առաջադրանքներ, հանձնարարություններ, հարցաշարեր, թեստեր և խաղեր: ՏՀՏ-ների և լեզվի լավ իմացությամբ աշակերտները նույնպես կարող են պատրաստել ինտերակտիվ դաս՝ դասավանդողին դարձնելով գործընթացի մասնակից և գնահատող:

Ինտերակտիվ մեթոդների շարքին այսօր կարելի է դասել նաև հեռավար ուսուցումը, որի իրականացման համար դասավանդողը պատրաստում է համապատասխան նյութեր, առաջադրանքներ: Հեռավար ուսուցումը ոչ միայն գիտելիքի պաշարի տրամադրման եղանակ է, այլ կարող է հանդես գալ որպես մանկավարժական տեխնոլոգիա: Նման մեթոդի առավելությունն այն է, որ դասավանդման խոսքա-ունկնդրային մեթոդներից սովորողն անցում է կատարում հետազոտական, ստեղծագործական գործունեության: Հեռավար ուսուցման մեթոդը թույլ է տալիս սովորողներին ինքնակազմակերպվել, իսկ դասավանդողին թույլ է տալիս ինտերակտիվ ռեժիմով միաժամանակ մի քանի նախագծեր իրականացնել, ինչպես նաև կազմակերպել ինտեգրված դասեր՝ ներգրավելով մի քանի առարկա:

Կատարելով ուսոմնասիրություններ՝ կարող եմ ասել, որ ֆրանսերեն լեզվի ուսուցման համար առաջնահերթ կարևորվում են աուդիո ձայնագրությունների անընդհատ լսումները:

Այժմ ներկայացնեմ դպրոցում իրականացված և հաջողված դասերից մեկը՝ ֆրանսերեն լեզվի դասավանդում ինտերակտիվ մեթոդով, որտեղ աշակերտները հնարավորություն ունեցան աուդիո ձայնագրությունների օգնությամբ զարգացնել իրենց բառապաշարը:

Դասի թեման էր Paris, տևողությունը՝ 45 րոպե:

Դասի նպատակներն էին՝

ա)սովորել արտահայտել մտքերը թեմայի շուրջ,

բ) օգտագործել թեմայի բառապաշարը քննարկման մեջ,
գ) ստանալ նոր տեղեկություններ թեմայի վերաբերյալ,
դ) ամփոփել ստացած գիտելիքները:
Դասի վերջում աշակերտները պետք է կարողանային՝
ա) օգտագործել թեմային վերաբերող բառերն ու արտահայտությունները քննարկման մեջ,
բ) արտահայտել մտքերը թեմայի շուրջ,
գ) կիսել թեմայի վերաբերյալ ձեռք բերած փորձն ու գիտելիքները համադասարանցիների հետ: Դասավանդման այս մեթոդի կիրառությամբ աշակերտները պետք է խորապես ուսումնասիրեին "Paris" թեմային վերաբերող բառերը: Դասի համար անհրաժեշտ պարագաներն են եղել՝ աուդիո նվագարկիչը, պրոյեկտորը, համակարգիչը, պաստառները, քարտերը, մարկերները: Ներկայացնենք դասի ընթացքը:
1. Կազմակերպչական փուլ:
2. Մտագրոհ (Brainstorming): Voyons ce que vous savez sur Paris.
Այս մեթոդը օգնում է ուսուցչին ակտիվացնել աշակերտներին: Պարզել, թե ինչ գիտեն աշակերտները նյութի մասին: Աշակերտները ասում են այն ամենը, ինչ գիտեն Փարիզի մասին:
3. Տեսահոլովակի դիտում և քննակում (Regarder et discuter): Աշակերտները դիտում են տեսահոլովակ Փարիզի տեսարժան վայրերի մասին, այնուհետև քննարկումներ անցկացնում ընկերների հետ:
4. Սլայդների դիտում: Աշակերտները դիտում են սլայդներ՝ որտեղ Փարիզի տեսարժան վայրերի նկարներն են և փորձում են կռահել պատկերված վայրը: Այնուհետև ինքնուրույն ստուգում են՝ արդյո՞ք ճիշտ են կռահել վայրը (Vérifie toi-même):
5. Աշխատանք զույգերով (Travail en binôme): Աշակերտներից մեկն ասում է որևէ տեսարժան վայրի անուն, մյուսը գտնում է որևէ բառ, որն ինչ-որ կերպ զուգորդվում է տվյալ վայրի հետ (Les associations):
6. Աշխատանք քարտերով (Travail de cartes): Աշակերտներից մեկը կարդում է քարտի վրա գրված տեսարժան վայրի նկարագրությունը, մյուսը կռահում է, թե, որ տեսարժան վայրի մասին է խոսքը:
7. Աշակերտները ներկայացնում են նախօրոք պատրաստած տեսարժան վայրերի նկարագրությունները, ցուցադրում պաստառներ (Décrire):
8. Աշակերտները դիտում են տեսահոլովակ Երևանի մասին և քննարկում (Regarder et discuter):
9. Խմբային աշխատանք պաստառներով (Travail de groupe): Ուսուցիչը բաժանում է դասարանը երկու խմբի: Խմբերը պաստառներին գրում են Փարիզի և Երևանի տեսարժան վայրերը գունավոր մարկերներով:
10. Աշխատանք խմբերով (Travail de groupe). կոչվում է "Praising" (գովաբանություն): Խմբերից մեկը գովաբանում է Երևանը, մյուսը՝ Փարիզը:
11. Վերջին հանձնարարությունը կոչվում է «Էքսկուրսավարներ» ("Guides"): Յուրաքանչյուր խմբից ընտրվում են երկու էքսկուրսավարներ՝ Փարիզի և Երևանի համար, որոնք պետք է ներկայացնեն քաղաքները: Դասի վերջում

ամփոփվում են նոր գիտելիքները: Աշակերտները գնահատվում են և նրանց հանձնարարվում է տնային աշխատանք:

Այսպիսով, ըստ Ի. Պ. Պոդլասիի խոսքերի. «Մանկավարժական տեսությունը վերացություն է: Նրա գործնական կիրառումը՝ միշտ բարձր արվեստ»: (Подласый И.П. 576 с.)

Եզրակացություն

Այսպիսով՝ «ինտերակտիվ» բառը թարգմանաբար նշանակում է «համագործուն դաս կամ միջգործունեություն»: Ինտերակտիվ դասի օրինակ կարող է լինել դասարանական ակտիվ քննարկումը, բանավեճը և խաղը: Նմանօրինակ դասերը սովորողների մոտ ստեղծում են մոտիվացիա՝ նրանց մոտ ցանկություն առաջացնելով ընթերցելու և վերծանելու, լսելու և հասկանալու, վերլուծելու և եզրահանգման գալու, և, ամենակարևորը՝ սեփական կարծիքն անվախ արտարհայտելու համար: Բազմաթիվ համագործուն ուսումնական խաղեր նպաստում են սովորողի բառապաշարի ընդլայնմանը, զարգացմանը, նորացմանը: Բանավիճային դասերը թույլ են տալիս սովորողներին ձերբազատվել բարդույթներից, փորձել օտար լեզվով ձևակերպել միտքը, կարծիքը, տեսակետը, և հնարավորինս օտար լեզվով մտածել: Նման դասերի ընթացքում դասավանդողը հնարավորինս քիչ է միջամտում և ավելի հաճախ հանդես է գալիս որպես ուղղորդող: Ուղղումներ կատարվում են միայն շատ կոպիտ լեզվական կամ քերականական վրիպումների դեպքում:Ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը:

Ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ աշխատանք են ծավալում միմյանց հետ, և ուսուցման պրոցեսի ընթացքում գերակայում է աշակերտների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ, նրա առաքելությունը միայն կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանդողը մշակում է նաև դասի պլանը (սովորաբար այն բաղկացած է լինում ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում աշակերտը պետք է օգտագործելով իր գիտելիքները և հմտությունները արդյունքում ամբողջապես ընկալի նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ թե պարզապես կատարում է վարժություններ, այլ կիրառում է իր ստեղծարար միտքը, երևակայությունը, զարգանում է նրա վերլուծական և քննադատական մտածողությունը, որոնք օգնում են առավել ամրապնդել գիտելիքները նոր նյութի վերաբերյալ: Այս ամենի արդյունքում աշակերտի մոտ ձևավորվում է ինքնուրույն ուսումնասիրելու, սովորելու գերագույն ցանկություն և մոտիվացիա, որը ուսուցչի առաջնային և ամենակարևոր նպատակն ու ձգտումն է: Առավելագույն

գիտելիք ստանալու պայքարում հաղթանակած աշակերտը ուսուցչի լավագույն ձեռքբերումն է:

Օգտագործված գրականության ցանկ

Meyers, C., & Jones, T. B. (1993). Promoting Active Learning. Strategies for the College Classroom. Jossey-Bass Inc., Publishers, San Francisco.
Musai, B. (2003). Teaching methodology.
M. З. Акопян, Г. Р. Петросян, В. А. Манукян Некоторые вопросы обучения интерактивных технологий
M. Z. Hakobyan, G. R. Petrosyan, V. A. Manykyan Some Issues of Practicing Interactive Technology
Подласый И.П. Педагогика. Новый курс: учебник для студ.пед.вузов. — М.: ВЛАДОС, 1999. — Кр. 1: Общие основы. Процесс обучения. — 576 с.: ил.
Мясоед Т.А. Интерактивные технологии обучения. Спец. семинар для учителей, М., 2004. 2.
Суварова Н. Интерактивное обучение: Новые подходы, М., 2005.